

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԻՊ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, 1931

ԹԻԻ 20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐԿԱՅ ՄԻՏՈՒՄԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿԻՆԵՐ

ՎՈՂԹԷՌԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Բ. Մ. ԵՂԻԱԵԱՆ

ԾԽԱԽՈՏԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԴԷՊՔԵՐ ԵՒ ԴԷՄՔԵՐ

Կ. ԴՈՒՆՏԱԳՃԵԱՆ

ԴԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՔԱՂԵԾ՝ Հ. ՓՈՂԱՏԵԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՉԱՆԻՑԻ ԷԶԸ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՔ ՀԱՆԻՊ

ՆՈՐ ԱԽԵՏԱՐԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, տարեկան բաժնեգրին է 150 զրուշ սուրի. Սուրիայ համար, և մէկ անգամ կէս տուար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղըրկուիլ եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ. չհրատարակուող յօդուածներու համար պէտք է ղրկել փաստի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկէջին վրայ մեքանով, ղիւրընթեռնի և մաքուր կերպով:

ՀԱԼԷՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐՔԱՐԱՆԻՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՅԱՆԿ 1930 ՅՈՒՆԻՍ 4-1931 ՅՈՒՆԻՍ 31. Շարունակութիւն.

Այգէզէն՝ Պրն. Սարգիս Վարդանեան 20 արծաթ, Տէրվիշ Վասէ Զէլալ Պէյ Էօ ղրշ. արծաթ, Պրն. Պետրոս Պէտոյեան 1 թրք. ոսկի (թուղթ), Տիկ. Ֆէրիտէ Իպրահիմեան 5 ղրշ. Սուրի Տիկ. Մարիամ Փիլավճեան (Ալպըսթան) 20 ղրշ. արծաթ, Ս. Փաւլոյի Հայ Աւետ. Եկեցին 629 ղրշ. արծաթ, Ֆարթըսը Հայ Աւետ. Եկեղեցին 2 ոսկի 240 ղրշ. արծաթ (Շարունակելի)

ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԵՆՈՒԹԻԻՆ ՄԵԻՍ

ՄԻ ՄԻԱՅՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԿԱՐՈՏ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Հայաստանի Կոչնակ-ին տարածման բաղձացող բարեսէր ազգային ժը՝ հաճած է, այս տարի եւս կրկնել իր \$500.00. ի նուէրը, որպէս զի, մեր կողմէն ալ նայնքան զեղչով մը, 500 հայ կարօտ գաղթականներու ղիւրութիւն ընծայուի, թերթը ստանալու:

ՍԻՒՐԻԱ, ՅՈՒՆԱՍՏԱՆ, ՊԱԼՔԱՆԵԱՆ ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐ, ՊԱՂԵՍՏԻՆ ԵՒ ԿԻՊՐՈՍ գտնուող Հայ կարօտ գաղթականներ պիտի կրնան օգտուիլ այս բացառիկ պիսեհութենէն, Հայաստանի Կոչնակ-ին բաժանորդագրուելով, ՄԻ ՄԻԱՅՆ 3.00 տուարի, փոխանակ 5.00 տուարի թր սովորական բաժանորդագրին է:

Զեղչեալ բաժանորդագրինը 3.00 տուար պէտք է ղրկել կանխիկ: Այս զեղչուած գինը պիտի տուի կարն ատեն մը միայն, մինչեւ լրանայ 500 նոր բաժանորդի արձանագրութիւնը:

ՓՈՒԹԱՑԷՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԻԼ ղեռ քանի փակուած չէ պատեհութիւնը:

THE GOTCHNAG PUBLISHING CO.

331— Fourth Ave., New York, N. Y., U. S. A.

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՄԸ


Վեր. 2. 3. Համարձու մեանի խնդիրը կը շարունակէ միտքերը գլուհի և յուզել: Ոյս առթիւ «Նոր Աւետարեի»ի գիրքը պարզելու համար կուգան քայլունիւ՝

1. Թէ այս խնդիրը Սաւիտի և Լիբանանի Հայ Աւետ. Միութեան անդիակ տարուան ժողովին մէջ հեղինակութիւն և ձեռնհաս մարմնի մը ցանձնուած և հոն երկար խորհրդակցութեանց առարկայ եղած էր, բայց «Նոր Աւետարեի»ի մէջ հրատարակուելու համար մինչեւ հիմա պաշտօնական արշաւանակի մը թերթիս չէ ներկայացուած:

2. Թէ այս խնդրին առթիւ «Նոր Աւետարեի»ի մէջ հրատարակուած թեր ուղէմ յօդուածները թերթիս պաշտօնականիւր չեն ցուցնել:

3. Թէ գանազան անձերու կողմէ՝ հրատարակուելու համար՝ այս խնդրին թեր ուղէմ յօդուածներ զրկուած, և անձնական նամակներով շատ մը հարցումներ ուղղուած են: Բայց ամէն բան նկատի առնելով՝ այսպիսի կարեւոր և նուրբ հարցի մը մասին թերթիս մէջ հրատարակուած տարրի անհատներու գրութիւններէն աւելի բան մը հրատարակել յարմար չէ դատուած, մինչեւ որ Միութեանը և վերստին հեղինակութիւն մարմինը վերջնական որոշում մը պաշտօնապէս մեզի հաղորդեն:

Հրատարակիչ Մարմին
«Նոր Աւետարեի»ի



ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 5 ՆՈՅԵՄԲԵՐ, 1931

ԹԻԻ 20

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՆԵՐԿԱՅ ՄԻՏՈՒՄԸ

Կեանքը միշտ կը շարժի, միշտ նոր երևույթներով կը յայտնուի, զորոնք թէպէտ կրնանք անտեսել և կամ հին ակնոցով դիտել, բայց որոնք ուշ կամ կանուխ իրենց իրականութիւնը զգալի կ'ընեն այս կամ այն կերպով: Կրօնական կամ եկեղեցական կեանքը ասոր բացառութիւն չի կազմեր: Բայց բոլոր այս տեւական փոփոխութիւններու մէջ կան անփոփոխելի հիմնական տարրեր: Ներկայիս՝ երբ աշխարհիս վրայ ընկերային գրեթէ ամէն հաստատութեան մէջ օգտակար կամ ոչ, սխալ կամ չիտակ, արմատական նորութիւններ, փոփոխութիւններ կը տեսնուին, կրօնքը և եկեղեցին ալ չէին կրնար այս ընդհանուր հոսանքէն չազդուիլ: Այս փոփոխութեանց անորոշութեան մէջ մարդիկ պէտք կ'զգան ապահով տեղ մը խորոխել, հաստատ կռուան մը գտնել, անսասան մշտնջենական հիմ մը փրկել: Եւ ասիկայ անհրաժեշտ է ցեղին հողեւոր ժառանգը, կրօնական անցեալ փորձառութիւնը կորուստէ փրկելու և ներկայ հողեւոր կեանքը վտանգէ ազատ պահելու համար:

Ներկայիս կրօնական բոլոր հաստատութիւնները, եկեղեցի, դպրոց, զանազան ընկերութիւններ կը քննադատուին ոչ—քրիստոնէական, ոչ—աւետարանական, ոչ—ուղղափառ նորութիւններով իրենց խնդիրները ազէտալիս:

Ինչ փոխած ըլլալնուն համար: Մեր նպատակէն դուրս է ըսել թէ այս որչա՛փ համաձայն է իրականութեան: Բայց կ'արժէ հարցը մասնաւորել միայն ժողովական եկեղեցիին համար, զիտնալու թէ անիկայ արդեօք որչա՛փ հաւատարիմ է իր նախկին սկզբունքներուն, թէ անիկայ տակաւին կը պահէ՞ իր աւետարանական ուղղափառութիւնը:

1930 ի Յուլիս ամսուան մէջ Անգլիա տեղի ունեցաւ ժողովական եկեղեցիի միջազգային յոյժ կարեւոր համաժողովը, և այս տարի թուականէս մօտ ամիս մը առաջ, Մանչէսթըր (Անգլիա) տեղի ունեցան ժողովական Միութեան Հարկերամեակի հաւաքոյթները: Այս երկու մեծ ժողովներուն մասնակցեցան ժողովական եկեղեցւոյ մեծ առաջնորդները: Ահա կ'ուզենք խօսքը ասոնց տալ յայտնելու ժողովականութեան ներկայ ըմբռնումը եկեղեցիի, հանգանակի և Բրիտոսի մասին:

Փրոֆ. Սէլպի, Օքսֆորտի մէջ ժողովականներու մեծ Աստուածաբանական ճեմարանին նախագահը, 1930 Յուլիսի համաժողովին մէջ խօսած է ճառ մը, որմէ կը քաղենք հետեւեալը.

«Մեր հիմնական հաւատքն է թէ ուր Բրիտոս է հոն է նաև եկեղեցին, և թէ Բրիտոս հոն է ուր երկու կամ երեք հոգիներ իր անունով հաւաքուած են:

... Բանգի կենդանի եկեղեցիի մը համար հանգանակի մը ստորագրութիւնը անհրաժեշտ չէ... Քրիստոսի եկեղեցին ակումբ մ'ըլլալէ շատ աւելի բան մըն է. անիկայ Քրիստոսի մարմինն է, որուն բոլոր անդամները Գլուխին հետ ուղղակի և կենսական յարաբերութեան մէջ են: Մենք կ'ընդունինք որ եկեղեցիի անդամակցութեան պայմանը՝ Յիսուս Քրիստոսի մասին ոչ թէ գաղափար մը (բառին իմացական առումով հաւատք մը) այլ Անոր հետ իբր իր Փրկիչը և Տէրը կենդանի, տնձնական միութիւն ունենալ է: Անշուշտ ասիկայ անհրաժեշտ կերպով կը պարունակէ մտաւորական դիրք մը ճշմարտութեան հանդէպ՝ ինչպէս որ է ան Յիսուսի մէջ, բայց այսպիսի մտաւորական դիրք մը անձնական յարաբերութեան հետ վտանգանակել՝ մեր տեսակէտով հիմնական սխալ մըն է: ... Մենք կը հաւատանք որ ունէ կենդանի քրիստոնէութեան համար էական երկու կէտերն են ճշմարտութիւնն ու ազատութիւնը: Ըշմարտութեան նուիրուիլ, որչափ ալ սուղ արժէ ան, և ազատութիւնը ունենալ հաւատքը կենդանի և հասկնալի բառերով արտայայտելու, ահա տոնք կը կազմեն ողն ու ծուծը թէ՛ քրիստոնէական գիտակցութեան և թէ՛ քրիստոնէական եղբայրակցութեան:»

Տր. Փալմըր, Ամերիկայի մէջ մեծագոյն առաջնորդող ժողովական հաստատութիւններէն մէկուն—Շրիգակոյի Աստուածաբանական ձեմարանին—Նախագահը, կ'ըսէ:

«Մենք՝ Ազատ եկեղեցիներու պատկանողներս՝ հիթ մեր խնամքին յանձնուած էական հոգեւոր ժառանգ մ'ունինք, անիկայ այն հաւատքն է թէ հոգեւոր կրօնք մը՝ արտաքին հեղինակութեան վրայ հաստատուած ունէ կրօնքէ մը գերիվեր է: Եթէ մարդիկ կարենային եկեղեցական միութիւն մը հաստատել

արտաքին ունէ հիմի մը վրայ, այսինքն գրուած, որոշուած, և վերջնական վաւերացումներու, վճիռներու վրայ, — զոր օրինակ առաջին չորս տեղերական եկեղեցական ժողովներուն, կամ Առաքելական հանգանակին, կամ նոյնիսկ Յիսուսի խօսքերուն վրայ — այդ միութիւնը ձախողանքի դատապարտուած պիտի ըլլար: Բարեկարգութեան գործը պէտք էր նորէն կատարուիլ: Մեր տեղը ուրիշ նոր եկեղեցիներ պիտի գոյութիւն առնեն շարունակելու համար մեր վկայութիւնը թէ ժողովներու, պապերու, հանգանակներու մէջ վերջնական հեղինակութիւն չկայ, անիկայ կայ միայն ճշմարտութեան... և սիրոյ մէջ:»

Օքսֆորտի մէջ Մէնսֆիլտ Գոլէճի փոխ նախագահը Տր. Ն. Միքլէմ այս տարուան ժողովին աւթիւ հետեւեալը ըսած է իր ճառին մէջ, որուն նիւթն էր «Աստուածաբանական ազատութեան և Աւետարանական հաւատքի պահպանումին համար պահանջութեան կոչ:»

«Իմացական ազատութեան մասին խօսելով՝ ես կ'աւելած չունիմ որ մեր աւանդութեան հաստատօրէն հաւատարիմ մնացած ենք: Մենք կրնա՞նք հաւատար կերպով պնդել թէ մեր կրօնքին հիմնական ճշմարտութիւններուն հաւատարիմ մնացած ենք: ... Թերեւս երբեք եղած չէ ատեն մը երբ հաւատքի լիզուն՝ ներկայիս եղածին չափ՝ անյարմար ըլլայ հաւատքի պարունակութեան: Այն տպաւորութիւնը ունիմ թէ ընդհանուր առումով մեր եկեղեցիներուն մէջ հին աւետարանին գիտակից անհաւատարմութիւն չկայ: Բայց արդի բառերով մեր կրօնքի արտայայտութիւնը յաճախ հին աւետարանին իրապէս համարժէք չէ: Անշուշտ յայտնի է թէ ինչ է հին աւետարանը: Անիկայ այն համուզումը և յայտարարութիւնն է թէ Աստուած այցելած է և փրկած է մեր ժողո-

վուրդը, թէ Աստուծոյ Որդին եկած է, թէ Քրիստոս մեր մեղքերուն համար մեռած է, թէ Ան թաղուած և դարձեալ յարութիւն առած է, թէ երկինքի և երկրի վրայ բոլոր իշխանութիւնները Անոր տրուած են: . . . Մենք երբեք ազատութիւնը ունեցած չենք մեր ախորժածը քարոզելու, կամ աւետարան մը հնարելու համար: . . . Արդիապաշտութիւն մը կայ զոր շատ աւելի յարմար է կոչել Ազատական Մովսիսականութիւն քան թէ քրիստոնէութիւն: Այս երկուքը իրարմէ զոտող բուն սահմանագիծը Յիսուսի Անձին մասին եւ զնո՞վ վարդապետութիւնն է: Կատարելապէս կ'ընդունիմ թէ նախկին քրիստոսաբանութիւնները հիմա անհասկնալի եւ անհաւատալի են: Բայց Յիսուս Քրիստոսը իբր մեր Քահանայապետը, Աստուծոյ Գառը, Աշխարհի Փրկիչը ընդունող հաւատքէն դուրս քրիստոնէութիւն չկայ եւ չի կրնար ըլլալ:»

Մէնսֆիլտ Դոլէճի Փրոֆ. Ճ. Հուէյլ արդիապաշտութեան գէժ աւելի յախուռն կերպով արտայայտուեցաւ իր ճառին մէջ, որ «չաբժուան ամէնէն յիշատակելի ատենախօսութիւնը» եղած է կարգ մը տեսակէտներէ դիտելով զայն: Անիկայ ուրիշ բաներու հետ ըսած է նաեւ հետեւեալը. «Առանց հաւատքի որ Քրիստոսը իր Աստուծոյ Որդի կ'ընդունի, առանց մեղքերու թողութեան որ խաչի սաղորտը կը շնորհուի, առանց Յարութեան վրայ հաւատք ունենալու Քրիստոնէութիւնը ոչ ևս է:»

Ահա այս մեծ առաջնորդները, Ամերիկացի թէ Անգլիացի, հաւատարիմ կը հռչակեն ինքզինքնին Ժողովական եկեղեցիին աւանդական ուղղութեան:

Իմացական ազատութիւն և աւետարանական ճշմարտութեան հաւատարմութիւն, այս է եղած և է Ժողովական եկեղեցիին սկզբունքը:

ԶԱՐԾԱՆԱԼԻ ԿԻՆԵՐԸ

Այսօր Անգլիոյ մէջ տեղ մը հիւանդանոցի մը ներքին տեսչուհին իր կեանքը ինչպէս նաեւ իր զիրքը կը պարտի վատ թաղի փրկութեան Բանակի մէկ կին պաշտօնեային: Այս երկու կիները իրարմէ շատ հեռու կ'ապրին, բայց անգամ մը այս երկուքը ճիշդ մահուան սահմանին վրայ իրարու հանդիպեցան և միասին պայքարեցան:

Իրենց հանդիպումին վայրն էր վատահամբաւ թաղին մէկ փողոցին վրայ մութ և աղտոտ սենեակ մը: Պաշտօնեան հոն կանչուած էր կէս պինով կընոջ մը կողմէ, որ Փ. Բանակի կայանը վազած էր ճշելով թէ իր վարձակալը ինքզինքը սպաննելու վրայ է և թէ կը սպառնայ սպաննել ունէ միջամտող մը:

Վատ թաղի պաշտօնեային սովորական գործին մէկ մասն էր նաեւ ինքնասպանութիւնները արգիլել, հետեւաբար գլխարկը գլուխը զրաւ և անձրեւի մէջ աճապարեց զէպի տրուած հասցէն: Դուռը կղպուած էր, բայց երբ պաշտօնեան զայն վարկաւ անոր ետեւէն արտաբանք մը զգալի եղաւ և դարձեալ լռութիւն եղաւ: Պաշտօնեան կրկին վարկաւ դուռը:

—Ո՞վ է այն, հարցուց կին մը:

—Միայն ես, ըսաւ պաշտօնեան: Սենեակի բնակիչը շատ անհաճելի շեշտերով աւելին գիտնալ պահանջեց:

—Փրկութեան Բանակն է, պատասխանեց պաշտօնեան համակերպաբար:

—Եթէ Բանակն է ուրեմն կրնաս ներս

գալ, ըսաւ ձայնը, բայց նոյն խիստ շեշտով:

Դուռը անմիջապէս բացուեցաւ:

Սենեակին մէջ բնակողը իր թաքստոցէն դուրս խոյանալով անմիջապէս դուռը կղպեց, երբ պաշտօնեան հագիւններս մտած էր:

— Հիմա ի՞նչ գործ ունիս հոս, պռապաշտօնեայի հրեսին, որ յայտնի տեսաւ թէ իր կեանքը իր սկիան վտանգի մէջ կը գտնուէր: Կինը խիստ շատ խմած էր, և կէս խենդացեր էր, բայց տակաւին կրնար արագօրէն խորհիլ: Ուղիղ միթոտը անոր հետ վարուելու միակ ապահով կերպն էր, և ճշմարտութիւնը առանց վերապահութեան պատմեց:

— Ես քեզ տեսնելու եկայ, քանզի լսեցի թէ դուն ինքզինքդ սպաննելու վրայ ես, ըսաւ պաշտօնեան:

Կինը դէպի սեղանը յառաջացաւ, որուն վրայ կը տեսնուէին կերակուրի փշուրներ և երկար բարակ շեղբով դանակով մը, նման անոնց զոր մտավաճարները այնքան ճարտարօրէն կը զործածեն: Այցելուն մէկ վայրկեան աւելի ուշ տեսած էր դանակը, որուն կոթը կնոջ բուռին մէջ էր արդէն:

— Այո, այդպէս է, ըսաւ կինը, տառջին անգամ ըլլալով իր ձայնը ցածքներով: Ես պիտի մեռնիմ, և հիմա պիտի մեռնիմ: Պէտք եղածէն աւելի ապրած եմ, և կ'ուզեմ անոր վախճան մը տալ: Եւ ինչո՞ւ դուն ալ չ'մեռնիս: Ինչո՞ւ միասին չ'մեռնինք:

Պաշտօնեայի ձայնին դողը հաղիւ կը մատնէր անոր զգացած վտանգը: Ան ըմբռնեց թէ պէտք էր ինքզինքը զըպիւր և ժամանակ չահիլ:

— Լաւ, ըսաւ պաշտօնեան, եթէ ես այս գիշեր մեռնելու ըլլայի դոնէ պատրաստ եմ անոր: Քու մասի՞դ ինչ կը խորհիս: Կստարեկապէս վատա՞հ ես որ դուն ալ մեռնելու պատրաստ ես:

Խոստովանութեան համար շատ տարօրինակ հարցում մ'էր: Մէկ երկու փոքր անդին թաուրը Պրիճի կառքերուն աղմուկը կը լսուէր, աղտոտ փողոցներու ձայները և հոտերը խոնու և հոտած օդի հոսանքով մը հանդարտօրէն սենեակէն ներս կը խաժէին: Այնպէս կը թուէր թէ լոյսն ալ ինքզինքը մարեկու մասին կը մտմտար:

Կնոջ ախուր դէմքին վրայ տարակուսող նայուածք մը տեսնուեցաւ: Պաշտօնեան տեսաւ զայն և անմիջապէս ջանաց օգտուիլ անկէ:

— Ձե՞ք կրնար աղօթել, հարցուց պաշտօնեան: առանց աղօթել փորձելու մեռնիլ լաւ չ'պիտի ըլլար, այդպէս չէ՞:

Ան արդէն լուռ կ'աղօթէր. և անմիջապէս սեղանին քով ծանկի եկաւ: Կինը մի քանի վայրկեան տատամսելէ ետքը անոր քովը ծնրադրեց: Դանակը տակաւին կնոջ աջ ձեռքին մէջ էր: Պաշտօնեային ձախ ձեռքը կամոցուկ մը բայց զօրաւոր կերպով անոր դաստակին վրայ իջաւ, և ամուր կերպով զայն բռնեց: Անոնք այսպէս աղօթեցին. և թերեւս ասկէ աւելի տարօրինակ աղօթք մը չ'մատուցուեցաւ: Բառերը նախ դժուարութեամբ սկսան դուրս գալ. քանզի դրան առջեւի սանդուխին վրայ տաքի ձայները արգելք կ'ըլլային: Բայց աստիճանաբար աղօթքը ռզի առաւ, և վախը փարատեցաւ: Ապա, յաջորդեց պարզ բառերու հեղեղ մը, որոնք մարդկային վիճակը հասկցող հրաշալի Քրիստոսը պատմեցին տառապող հոգիի մը: Այս կինը որ տարիներէ ի վեր իր զաղտնիքները իր սրտին մէջ պահած էր, քանոնք հաղորդելու ամօնալուծն և իրեն սրտակից բարեկամի մը չզոյւթեան պատճառաւ, լսեց թէ ինչպէ՞ս անոնք արդէն ծանօթ էին և անոնց համար իրեն ցաւակից մը կար: Ապշելով գտաւ թէ ինք ասոր կը հաւատար: Ասիկայ

այնպիսի աղօթք մ'էր զոր ինք երբեք լսած չէր, այնչա՛փ կենդանի և վստահութեամբ լեցուն աղօթք մ'է որ անկարելի կ'ընէր աղօթքի մատուցուած Անձին ներկայութեան կասկածիլ: Կնոջ ձեռքը թուլցաւ և դանակը տախտակամածին վրայ ինկաւ: Վատ թաղի պաշտօնեան հասկցաւ թէ յաղթանակը մօտ էր:

Երկու կիները երբ ոտքի ելան, պաշտօնեայի թեւ միւս կնոջ մէջքը փաթթուած էր եւ երկուքին ալ երեսներէն վար արցունքներ կը հոսէին: Տասը վայրկեան առաջ անոնցմէ մէկը սպանութեան և ինքզինքը մեղացնելու մասին կը խորհէր. իսկ հիմա աթոռի մը վրայ ինկած էր, դողդոջուն՝ բայց ըզզաստացած. և այն կինը՝ զոր ինքը պիտի սպաննէր՝ իր վրայ ծռեցաւ եւ զինքը համբուրեց:

Համբոյր մը, և գաւաթ մը թէյ: Առաջինը՝ սիրտը տաքցնելու, և երկրորդը՝ սաստիկ հակազդեցութեան մը ցաւերուն մէջ մարմնի մը դողդողլը դադրեցնելու համար, և երկուքը միասին՝ աներեւակայի թրէն տխուր պատմութիւն մը դուրս հանելու համար:

Կինը նստած պատմեց իր պատմութիւնը. լաւ ընտանիքի մը գաւակն էր ան և լաւ ուսում առած: Բայց հիմա պաշտօնեային գրմացը կը գտնուէր գիսախել մազերով, կոշտացած անճոռնի մարմնով, և այնչա՛փ հինցած և քիչ հագուստներով որ իրեն համար անկարելի եղաւ գութըսը հլլիլ մինչեւ այն ատեն երբ պաշտօնեան իրեն համար նոր հագուստներ ճարեց: Անիկայ հիւանդապահ ըլլալու պատրաստուած էր, և Լոնտոնի մէկ հիւանդանոցին մէջ Քոյր կոչուելու աստիճանին հասած էր: Ապա, զժբաղդութիւնը ունեցած էր մէկուն ընկերակցութեան մտնել, որուն պատճառաւ օդի խմելու բուռն փափաքը իր մէջը զօրացած էր: Օր մը նշա-

նուոր հիւանդի մը վրայ վիրաբուժական գործողութեան մը պահուն պէտք էր պատրաստ գտնուիլ. բայց այնքան հարբած էր որ չկրցաւ իր պարտականութիւնը կատարել: Այս գժրախաօրինապանցութեան համար անմիջապէս գործէն ձգուեցաւ. իր գործը՝ որ այնքան փայլուն ապագայ մը կը խոստանար՝ կործանեցաւ: Զէր կրնար իր բարեկամներուն հրեար նայիլ. իր բոլոր գրամը վատնած էր: Ծարահատ՝ հիւանդանոցի մէջ ծառայող օրիորդի օգնութիւնը խնդրելու զիջանկեցաւ. օրիորդը զայն իր մօրը քով զրկեց որ իրեն պէս խմող մըն էր: Երկու կիներ միասին ապրեցան, միասին ճնկեցին, զիրար աւելի ստորնացնելով, մինչեւ այն գիշեր երբ ասոնցմէ մէկը ինքնասպանութիւն փորձելու չափ խենդացած էր և միւսը Փըրկութեան Բանակի կայանը վազած՝ օգնութեան համար:

Կայանի պաշտօնեան այս կնոջ բաներ մը պատմեց, որոնց նա երբեք չպիտի հաւատար եթէ աղօթելու համար ծռներ գրած պահուն տարօրինակ համոզումով զինքը չզրաւէր: Գինեմոլութիւնէն ազատելու ջանքերէն յոստահատ՝ համոզուած էր որ միակ ճամբան ինքնասպանութիւնն էր. բայց ահա, այս վիճակին մէջ, լսեց վարդապետութիւն մը որ զինքը դարձեալ կեանքի կը հրաւիրէր: Կարծես երազի մը մէջ ան հաւանեցաւ պաշտօնեայի առաջարկին, որուն համեմատ ան՝ Փրկութեան Բանակի գինեմոլներու յատուկ մէկ տունը պիտի մտնէր: Այս կինը յարմար ժամանակին այս տունէն դուրս ելաւ իբր վերստին ստեղծուած արարած մը: Զեռք առնուած միջոցներու շնորհիւ անիկայ իր նախկին գործը վերսկսաւ, և աւելի ըլլալով անոր մէջ յաջողեցաւ:

Այս սրտաշարժ պատմութիւնը քաղուած է «GOD IN THE SLUMS» գրքին WONDERFUL WOMEN խորագրով գլուխէն:

ՎՈՒԹԵՌԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Բայց լուրջ է. ո՛չ հեղնանք, ո՛չ փոխարեութիւն: Վերնագիրը, թէև գայթակղական, պարզ ու նիւթական իրողութիւնն է որ կը յայտնէ: Վուրթնը իր ձեռքովը շինել տուած է եկեղեցի մը, քարով կիրով կառուցուած, որուն գոյութեան հս ալ չհաւատացի մինչև որ գացի տեսայ, մէջը մտայ ու քարերը շաշափեցի:

Ինծի պէս թովմասներ չատ կան:

Բայց եթէ թովմասականութիւնը գոյութիւն չունենար, ո՞վ պիտի ըլլար քննողը: Թովմասները իրենց որոշ կոչումը ունին մարդկութեան մէջ: Առանց անոնց կնիքին, դիւրին պիտի ըլլար վաւերական ճշմարտութիւնը զանազանի անվաւերէն: Ծշմարիտ թովմասութիւնը ճշմարտութիւնը փրկող ու սիրող ըլլալ մը կ'ենթադրէ: Թովմասներուն կարելի է խօսք հասկըցնել: Դիւրափոփոխ հաւատք մը չէ իրենցինքն: Դժուար կը համոզուին. բայց ամէն համոզումի մէջ հաստատուն կը մնան: Անպայման կ'ուզեն փորձառական հիմունքներ իրենց համոզումին համար, և—կարեւորը—չեն ապրիր առանց համոզումի: Անկեղծօրէն քննող, իրատեսօրէն դատող, հաստատուն գտնին չզատուող մարդիկ կ'ըլլան անոնք: Կը բաւէ միայն որ իրողութիւնները պարզօրէն ցուցուն իրենց, ու կը հաւատան: Եւ երբ կը հաւատան, ճշմարտօրէն կը հաւատան:

Խօսքս Վուրթնի թովմասներուն մասին չէ, այլ՝ ընդհանուր թովմասութեան: Վուրթնի մասին արիշ պատմելիք ունիմ—իր եկեղեցին այցելելս:

* *

Ժընեւի հագուագիւտ օրերէն մէկն է, պայծառ օդով՝ ընդարձակ հորիզոն մը, այնքան որ կարելի է դիտել Ալպեաններու շարքը, արեւու ճաճանչին

տակ թռթռուն, արշաւելու պատրաստ բանակի մը պէս ոտքի կայնած ձիեր ճերմակ բաշերով, և իրենց գլխաւորը Մոն Պլան, երկնածիգ ու խրոխտ: Անոնց տեսքը մարգուս մէջ եռանդ ու շարժում կ'ըստեղծէ: Դիտողին կոչ կ'ընեն, դո՛ւրս ելիր, և արշաւէ՛: Եւ իրենց կոչը հրաման մը կը դառնայ մէջդ տակաւ: Ասանկ օդով քաղաքին մէջ փակուած մնալը աններելի է երկրի մը մէջ ուր տարուած ընթացքին հազիւ 15 օր իրարու հետէ անամպ երկինք կը տեսնենք: Արդ՝ մեր արշաւանքը այդ օրը ուղղեցինք գէպի Ֆէռնի Վուրթն:

Ֆէռնի Վուրթն անունն է այն գիւղին ուր այս մահկանացուն իր կեանքին վերջին կէսը ապրած է: Զուրիցերիոյ սահմանէն դուրս, Յրանսական հողին վրայ կը գտնուի ան, ժընեւէն կէս ժամ հանրակառք ու շոգեկառքով: Դիւղը նշանաւոր դարձած է՝ հողեղէն զանազան սպասներ շինելու իր մասնագիտութեամբ: Մեր օթեւանին մէջ երկու տարի է ի վեր կը գործածէինք, բիրեղէ գաւաթի տեղ, Ֆէռնի Վուրթնի մէջ շինուած կիտուածաւոր հողաբաժաններ ճաշի սեղանին վրայ, կազմով կոշտ ու հաստ, արաբ շրթունքի պէս բայց իրենց փայլուն կանանչովը գրաւիչ է եւ տեսքովը բանառեղծական: Արդ կ'երթայինք տեսնելու գիւղը որուն շինած բաժաններէն ջուր կը խմէինք:

Ճարտնցի մը և ես, երկու հոգի էինք միայն: Սահմանագծին վրայ Յրանսացի պահակները մեզմէ անցազիր ուզեցին: Հետերնիս չէինք առած: Բաց գլուխով, առանց պայուսակի, անհագ օտարականներու մեր կեցուածքը, աղբից համազելու պաշտօնեաները, որ մենք պարզ քուրխքներ էինք: Թոյլատրեցին որ սահմանագիծը անցնինք առանց անցազրի: Վերադարձը չէինք

հոգար: Մեր այս օրինապանցութիւնը հեզնօրէն կ'արգարանար սասով, որ Վոլթէոնի բնակարանը տեսնելու կ'երթայինք—ինքն ալ օրինապանց մը ռարիշ մարդերու մէջ:

* *

Պարզ և անշուք գիւղ մը կը գտնենք Ֆէռնի Վոլթէոնը: Անհրապոյր կ'երեւայ բոլորովին, կարծես անապատին մէջ տնկուած գաղթավայր մը: Ո՛վ հակասութիւն այս գիւղին և Զուիցիւրիոյ բլուրներու մէջտեղերը հաստատուած գիւղերու միջեւ:

Մօտենալով սակայն՝ կամաց կամաց կը համակրինք գիւղին: Մէջը շարժում կայ, աղուոր եռուզեռ մը: Մարդիկ զբաղուած են: Գլուխը վերցնող, օտարը դիտող մը չկայ: Աղջիկ ու տղայ մը իրարու ձեռքէն բռնած կը քուլեն զուարթ խօսակցութիւնով: Նահապետական շուքով ծեր հայրիկ մը կեցեր է մայթին վրայ, իր ցուպին կռթնած: Երկու աշխատաւորներ արօր մը կը շտկեն: Հսկայ ձիու մը վրայ նստած տղայ մը զայն լծելու կը տանի: Ահա հոս են բրուտներու գործարանները: Կը մտնենք, կը տեսնենք իրենց աշխատանքը: Գիւղը ընտանի դարձած է ա՛լ մեզի:

Կանգ կ'առնենք աղբիւրի մը առջեւ: Խոշոր աւազան մըն է ան: Մէջտեղը կայ սիւն մը որուն չորս կողմերէն՝ արձաններու բերնէն առատօրէն դուրս կը վազէ պաղ ջուրը: Շինուածքը պեղարու հետտական է: Հնութեան չուք մը ունի: Մէկ եզերքին վրայ երկու կիներ լուացք կ'ընեն: Աղջնակ մը կը մօտենայ սափսրով: Տղայ մը չորս կողմ կը բերէ ջրելու: Աղբիւրը կեանքն է գիւղին:

Ահա հարիւրեակ մը մանուկներ կը կը խաղան բակի մը խճաքարերուն վրայ: Գիւղին զպրոցն է այս, անոր կենսական մէկ մասը:

Դիմացն է հիւանդանոցը, մաքուր, կոկիկ, որ պահապանի պէս կը հսկէ մէնուն առողջութեան վրայ:

Կ'անցնինք մեծ հրապարակը: Շըրջապատուած է ծառերով: Մէկ կողմը պողոտան, միւս կողմը ընդարձակ խաղավայր մը համայնքին մանուկներուն համար: Պողոտային մօտ, յարմար դիրքի մը վրայ կանգնած է արձան մը: Տարեց մարդիկ շուրջը հաւաքուեր են, նստարաններուն վրայ: Կնճիւռ մը մըթաղնած է անոնցմէ մէկուն ճակատը: Միւսը խորհրդաւոր նայուածքով կը գիտէ իր փիլիին մուխը:

* *

Արձանը ոտքի վրայ կայնած է քարէ բարձր պատուանդանի մը վրայ: Միջահասակ, կրնայի ըսել՝ կարճահասակ, նրբակազմ մարդ մը, մէկ ոտքը յառաջ նետած, քալելու շարժումին մէջ է: Զեռքի ցուպին կը կռթնի կիսովի: Միւս ձեռքին մէջ բռնած է իր գլխարկը՝ ծալուած: Անութիւն տակ առեր է գիրք մը: Կը նմանի իր բեմը գացող քարոզչի: Գլուխը դէպի առաջ՝ վար հակած է: Խոկում ունի: Բայց ժպիտ մը կը լուսաւորէ իր դէմքը: Դիմագիծը ակոսուած է մտածումներու հետքով, և տարիներու բեռը կքեր է իր քամակը: Բայց իր ամբողջ արտայայտութիւնը վառ հետաքրքրութիւն մը կը կրէ: Այդ տպաւորութիւնը կը թողու վրագ, ինչ որ մեծ հայրիկ մը՝ երբ խաղէն դէպի ետին վազող իր երկու թռչնիկները ողջագուրելու պատրաստուի:

Վոլթէոն արձանն է այս:

(Շար.)

Բ. Մ. ԵՂԻԱՆԱՆ

ԾԻԱԽՈՏԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ*

Անոր թունաւորման մասին եղած հարցման, բժիշկը՝ իր ծխելը ցոյց տալէ տարբեր միջոցաւ պարտի պատասխանելու Այս հարցի նկատմամբ եղած աշխատանքները բազմաթիւ են, ախտաբանական հատորներ մասնաւոր գլուխ մը կը յատկացնեն ծխահաւորեալ (tabagisme), աշխատանքներու մէջ, քիմիագէտներ և փորձարկուներ կ'ուսումնասիրեն ծխախոտը, անոր բաղադրութիւնը և օրկանիզմի վրայ ձգած ազդեցութիւնը։ Մենք նպատակ չունինք հոս բնագիտութեան ակնարկ մը նետելու այս բոլորին վրայ, այլ կը բաւականանանք պարզելու ամենավերջին ուսումնասիրութիւնը, որ կապ ունի ծխախոտի հանդէպ եղած վարժութեան և անոր՝ արեան շրջանի և կեղրոնական ջղային դրութեան վրայ ունեցած ազդեցութեան հետ։

Ամէն ոք գիտէ որ ծխախոտը, ծխողի մը և ոչ-ծխողի մը վրայ միեւնոյն ազդեցութիւնը չ'ընէր։ Փորձառական մէթոտը կ'ապացուցանէ վարժութեան իրականութիւնը և նաեւ թունաւորման պարագաները։ Հեօնի, Տրյուքենի, Փորթիի կատարած փորձերը ցոյց տուին որ ձուկերը կրնային մեծ ծառայութիւն մատուցանել թունաւոր նիւթերու ուսումնասիրութեան մէջ։ Վերջին տարիները, Թիվեօի և իր աշխատակիցներու շնորհիւ յայտնի եղաւ նաեւ որ ձուկ

կերու քով, ծանր խանգարումներ կը յառաջանային եթէ անոնց ապրած ջուրին աւելցուէր ծխախոտի թրջոց (nicotinarum) և կամ ծխախոտին թոյնը եղող նիքոթինը։ Մեր կատարած փորձերը տեղի ունեցան անսլշ ջուրի ձուկերուն վրայ։ Նախ՝ մէկ լիտր ջուրի մէջ դրինք 2 կրամ ծխախոտ, 24 ժամ վերջ, քամեցինք ջուրը և 7,5 առ հարիւր, յետոյ յաջորդաբար 10, 15 և մինչեւ 22,5 առ հարիւր համեմատութեամբ Սէնի ջուրի մէջ խառնեցինք, ուր ձուկերը կը կենային 24 ժամ և վերջէն, երկու օրը անգամ մը, կը դրուէին հոսող (ոչ ծխախոտեայ) ջուրի մէջ։

51 օրուան վարժութենէ վերջ ծխախոտի համեմատութիւնը բարձրացուցինք 35 առ հարիւրի և կատարեցինք բաղդատական փորձառութիւն։ 600 խոր. սանթիմ. ջուրի մէջ դրինք 3 ձուկ որ վարժուած էին ծխախոտի, և հեղուկի նոյն քանակութիւնը և ծխախոտի համեմատութիւնը անեցող ուրիշ ամանի մէջ ալ դրինք 3 ուրիշ, բայց նոր ձուկ։ Երկու ժամ վերջ, այս նոր ձուկերը մեռան, իսկ ծխախոտին վարժուած ձուկերէն երկուքը արտաքինապէս առողջ մնացին, իսկ երրորդին հաւասարակշռութիւնը խանգարուեցաւ։ Յետոյ անոնք դրուեցան Սէնի հասարակ ջուրի մէջ և երեքն ալ ապրեցան։

Ուրիշ փորձի մը մէջ, գործածուած ջուրին թունաւորման համեմատութիւններն էր 40 առ հարիւր. ուր դրուած չորս ձուկերը (2 նար և 2 վարժուած) երկու ժամ վերջ անշարժութեան մատնուեցան, իսկ երբ անոնք դրուեցան հասարակ ջուրի մէջ, ծխախոտի թունաւորման վարժ ձուկերը արթնցան, շարժիլ սկսան և գտան իրենց հաւասարակշռութիւնը, բայց նորերը չվերականգնացան։

* Մեր օտար յարգելի աշխատակիցներու այս կարեւոր յօդուածը, որ հազիւ միջազգային մամուլի մէջ երևցած՝ հաճոյքով տըրամադրուեցաւ մեզ հեղինակներու կողմէ, ցոյց կուտայ գիտութեան ամենավերջին վճիռը ծխախոտի նկատմամբ։

Իսկ սրտի, երիկամունքի, ջիղերու կամ երակներու հիւանդութիւն ունեցողները լաւ կ'ընեն որ աւելի ուշադրութեամբ կարդան այս յօդուածը։ Ծ. Խ. Առողջ կեանք»

Իսկ, աւելի թուաւոր ջուրի մէջ դրուած նոր ձուկերը, մեռան 45 վայրկեանէն և աստիճանական թուաւորման վարժուածները վերապրեցան:

Նիֆոթինով պատրաստուած հեղուկները նաև տուին միևնոյն արդիւնքները:

Գալով ծխախոտին՝ արեան շրջանառութեան և ջրային կեդրոնական գրութեան վրայ ըրած ազդեցութեան, դասական բոլոր հեղինակները կը յիշատակեն այդ թուաւորումով յառաջացած *athérome* ի պարագաները և այդ առթիւ եղած վէճերը: Մենք եւս պիտի ծանրանանք ծխախոտի ձուխին՝ շնչերակային ձգտումը (քանիտն առօրինակ) բարձրացնող յատկութեան վրայ, որու նկատմամբ Շ. Ֆլէկ կ'ըսէ հետեւեալը:

«Ծխախոտի ձուխը, թոքերու մէջ անցնելէ անմիջապէս վերջ, նախ շնչերակային ձգտումը կ'իջնէ և սրտի վարկը կը դանդաղի. յետոյ կը բարձրանայ նորմալէն վեր և սրտին զարկն ալ կ'արագանայ, իսկ ատեն մը վերջ, աճէն ինչ կ'ստանայ կրկին բնական վիճակ: Այս ելևէջի պահուն տեղի կ'ունենայ խիստ կերպով երկամի անօթային կծկում և բաւականին երկար ատեն, որու կը յաջորդէ այս անգամ անօթային ընդլայնում, իսկ ուղեղի, քթի և բերնի հեղաթաղանդներու մէջ հակառակը տեղի կ'ունենայ: Բերանային և կոկորդային ծխածծումը աւելի նուազ սաստիկ արդիւնք կուտայ»:

Ծխախոտին՝ սրտին վրայ ըրած ուղղակի ազդեցութեան նկատմամբ Տանի-թորի, Սիմիս և Մարիի կ'ըսեն հետեւեալը. «Սիկարին ձուխը ծխողներու և ոչ ծխողներու քով, անմիջականօրէն սրտանօթային (cardio—vasculaire) գործարանին մէջ, շեշտուած խանգարում յառաջ կը բերէ, որը կը յատկանշուի, նախ՝ օրկանիզմի կեդրոնական և

յետոյ շուրջի մասերուն մէջ տեղի ունեցած անօթային կծկումով, որով՝ շնչերակային ձգտումը կը բարձրանայ 2—3 աստիճան և բազկերակին զարկը 20 էն 40 անգամ աւելի կ'ըլլայ: Հին-րիֆուսի կատարած վերջին փորձերը ճապարի վրայ, կ'ապացուցանեն որ ծխախոտի ձուխը արեան շրջանառութեան մէջ խանգարումներ կը յառաջացնէ և կարգ մը ուրիշ աշխատութիւններ նաև ցոյց կուտան ակնյայտնի կերպով ծխախոտին շնչերակային ձգտումը բարձրացնող յատկութիւնը:

Ծխախոտը ոչ միայն արեան շրջանառութեան վրայ ազդեցութիւն ունեցող թոյն է, այլ նաև թոյն է կեդրոնական ջրային գրութեան համար: Ժ. Կիյեմի և Ժիւի՝ ճագարի վրայ փորձերէն կը հաստատուի որ ծխախոտային տեւական թուաւորման հետեւանօք, անոր ուղեղային կեղեւը (*écorce célebrale*) կ'ունենայ բջիջային վնասուածք և ուրիշ կենդանիներու քով ալ կը նշմարուի յիշողութեան խանգարում և այլն: Փալլոլի՝ բարձրագոյն կենդանիներու վրայ կատարած փորձերը նաև հաստատական են այս տեսակէտով:

Ուրեմի, մնալով փորձառական հողի վրայ, կրնանք հետեւցնել որ ծխախոտի հանդէպ եղած վարժութիւնը կարելիութիւն է և միևնոյն ատեն անիկա թուաւոր ազդեցութիւն մ'ունի թէ՛ արեան շրջանառութեան և թէ՛ ջրային կեդրոնական գրութեան վրայ:

G. ZAMFIR & LÉON BINET

de la Faculté de Médecine de Paris

Աւելի ընդարձակ ծանօթութեան համար կը յանձնարարենք Տագթ. Ա. Ապուհայանի «Ծխախոտի պատմութիւնը» գիրքը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԴԵՐ ԽԱՂԱՅՈՂ ՄԵԾ ԴԷՊՔԵՐ ԵՒ ԴԷՄՔԵՐ

1

ՄԵԾԻՆ ՍԱՐԿՈՆ Ա.

Քրիստոսէ 5000, թերեւս քիչ մ'ալ աւելի տարիներ առաջ, Մուսուլի և Միջագետքի դաշտագետիները սահմանագծող լեռնաշղթաներէն դէպի վար կ'իջնայ Սիւմմերեան անուն ժողովուրդ մը, թէպէտեւ ճերմակ ցեղէն բայց ոչ Սեմական, և կը տեղաւորուի Սէնաարի դաշտերուն և Միջագետքի հովիտներուն վրայ: Այն հինաւուրց ժամանակներուն, այդ ժողովուրդը յառաջ բերաւ քաղաքակրթութիւն մը՝ զոր հիմա մարդկային ազգը հիացումով կը դիտէ: Սկիզբները ասոնք իրարմէ անկախ քաղաք-պետութիւններ հիմնեցին, որոնց գլխաւորներն են՝ Էրիտու, Ուր, Ուրուք, Աքքատ հայրն:

Ասոնց Քաղաքակրթութիւնը: Ազիւսներու վրայ գիր գրեւոր, անասնաբուծութեան, երկրագործութեան, վաճառականութեան, քանդակագործութեան, մետաղագործութեան, հանքագործութեան արուեստներու տեղեակ էին: Եփրատի և Տիգրիսի վրայէն նաւակներով եւ լաստերով ճամբորդութիւններ կ'ընէին, թրծուն ազիւսներէ տուններ, տաճարներ, պալատներ կը շինէին եւ պատերազմի ատեն երկաթեայ թուրերով և սուրիներով կը պատերազմէին: Այս քաղաք-պետութիւններու միջեւ դաշնակցային կապ մը չըլլալուն պատճառաւ իրենց մէջ անընդհատ պատերազմներ կային որ զիրենք տկար և ուժ ժառանգ չըլլին:

Այս միջոցին Արաբիոյ անապատներէն Սեմական ցեղեր, հակառակ Սիւմմերեանց ընդդիմութեան, կամաց բայց շարունակաբար գալով անոնց երկրին մէջ տեղաւորուեցան, և ժամանակ մը եղաւ

որ այս Սեմականները Աքքատ քաղաքը և անոր շրջականները լեցուցին. և օրին մէկը, Աքքատի քաղաք-պետութիւնը բոլորովին այս նորեկ գաղթականներուն ձեռքը անցաւ: Վերջապէս Քրիստոսէ 3800 (ըստ ոմանց 2800) տարի առաջ Աքքատի իմաստուն և քաջ թագաւորը Սարկոն Ա. (Ասորեստանի Սարկոններէն չէ) բոլոր Սիւմմերեան քաղաք-պետութիւնները, Սիւրիան եւ Ելամի մէկ մասը նուաճելով, Սիւմմերեան և սեմական արեւներէն կեդրոնաձիգ, «միաձուլ» ընդարձակ կայսրութիւն մը կերտեց և Սիւմմերեան քաղաքակրթութիւնը իր ցեղին ոտքիցն ելով հանդերձ՝ զայն աւելի զարգացուց և ընդլայնեց: Հազարաւոր ասորիներէն ի վեր միջարուած Սիւմմերեան և այլ ազգերու զբաղանջութիւնը հաւաքելով, ազիւսէ գիրքերու վրայ գրել տուաւ, և աշխարհիս էն հին գրագարանը հիմնած եղաւ:

Ահա այս մեծանուն անձն է որ համաշխարհային պատմութեան մէջ մեծ գեր խաղացող սեմական քաղաքակրթութեանց հիմնաքարը դրաւ: Այս Մեծն Սարկոն Ա. է որ Համուրապիի և Մովսէսի փառաւոր գերութուն ճամբայ բացաւ, և դարձեալ շատ հաւանական է, այս վեհափառ թագաւորն էր որ Աշխարհիս մէջ ամենէն առաջ կեդրոնական, Միացեալ տէրութիւն մը կազմակերպեց:

— 2 —

ՀԱՄՈՒՐԱՊԻ

Մեծն Սարկոնի հիմնադրած պետութիւնը (Ն. Ք) 2500 ին քանի մը մասերու բաժնուեցաւ եւ սկսաւ տակաւ տրկարանալ եւ վատասերիլ. եւ Ն. Ք 2300 ին Սիւրիայէն Ամորացի ցեղեր գալով Բաբելոն գաւառակին մէջ տեղա-

աւորուեցաւ եւ հոն կէս անկախ տէրութիւն մը կազմեցին :

Յետոյ, (Ն . Բ .) 2100 ին , այս Ամորհացի իշխաններուն վեցերորդը , այն մեծահամբաւ Համուրապին իր քաջամարզ եւ կանոնաւոր բանակին զլուխը անցած՝ բոլոր Աքքատ—Սիւմերեան երկիրները եւ ամբողջ Ելամը նուաճեց եւ Պարսից ծովէն Միջերկրականի եզերքը երկարող մեծ եւ միացեալ տէրութիւն մը յառաջ բերաւ եւ զայն Բաբելոն անուանեց :

Բայց , Համուրապիի մեծութիւնը եւ արժէքը կայսրութիւն մը կամ ազգ մը կերտելուն մէջ չէր միայն : Այս փառապանծ թագաւորը , մինչեւ իր օրերը , այն ժամանակի քաղաքակիրթ երկիրներու մէջ գործածութեան մէջ եղող բոլոր սովորոյթները , կանոնները , օրէնքները հաւաքել տուաւ եւ անոնցմէ օրինակիրք մը յօրինեց :

Համուրապիի օրինակիրքին մէջի կարգ մը օրէնքները Մովսիսական օրէնքին մէջ յիշուածներուն շատ կը նմանին , տանաբանեայ պատուիրանաց մեծ մասը անոր գիրքին մէջ գրուած են : Այս նմանութենէ թելադրեալ մաս մը պատմաբաններ յանդիմեցան պնդելու թէ «Մովսէս ուրիշ բան չըբաւ այլ միայն Համուրապիի օրինակիրքը ընդօրինակեց» : Բայց ասիկա ճշմարիտ չէ . քանզի Համուրապիի օրինակիրքին մէջ շատ բաներ կան որ բաղդազուշակութիւն են , աստեղանշմարութեան սնուի բաներով խառնուած են . եւ երբեմն անգութ եւ խղճի հակառակ օրէնքներ ալ անոր մէկ մասը կը կազմեն : Եթէ սապէս ըսենք ճշմարտութեան համապատասխան կ'ըլլայ . Մովսէս Աստուածային ներշնչութիւն լոյսին տակ Համու-

րապիի օրինակիրքէն խորայնի ժողովուրդին օգտակար օրէնքներ ընդօրինակեց եւ անպատշաճները նետեց :*

Համուրապիի օրէնքները ընկերային կեանքի մէջ կանանց բարձր եւ պատուաւոր դիրք կուտայ , մանաւանդ այրի կիներու եւ որբերու հանդէպ զթափութիւն , համակրանք ցոյց կուտայ :

Օրուան 24 ժամերու , եօթը օրերու բաժանումը , եօթներորդ օրուան հանգըստի յատկացումը ժամուան 60 բոլորներու եւ բոլորներու 60 երկվայրկեաններու բաժանումը , Համուրապիի օրինակիրքին մէջ յիշուած են եւ Մովսէսէ քանի մը հազար տարիներ առաջ գործածութեան մէջ էին :

Համուրապիի օրէնքները 3000 տարի եզրկտոս , Սիւրիա , Միջագետք , Պաղեստին , Արարատ , Պարսկաստան եւ Գետացոց երկիրներուն մէջ հեղինակութիւն եւ իշխանութիւն ունեցաւ , եւ տակաւին Եւրոպական եւ Ամերիկեան օրինակիրքերուն մէջէն կը խօսի :

Հոնտանի փառաւոր դրամատուններու կառուցումէն հազարաւոր տարիներ առաջ այն վայրերուն մէջ մինչ ճեմակ եւ երկայնամագ արջեր կը պտըտէին եւ այն անմարդաբնակ հողերուն վրայ գայլեր կ'ոռնային , Համուրապիի մայրաքաղաքին՝ Բաբելոնի՝ մէջ պանքաներ հիմնարկեց : Փիւնիկէի եւ կարկեդոնի մեծափարթամ վաճառականներուն ծնանելէն շատ դարեր առաջ , Բաբելոնի վաճառականներուն կարաւանները Պարսկաստան , Հնդկաստան , Սիւրիա , Եգիպտոս եւ ուրիշ հեռաւոր երկիրներ երթալով վաճառականութիւն կ'ընէին : Համուրապիի սուրհանդակները օրէնսգէտ ինքնակալին աղիւսէ նամակները առնելով գանաղան նահանգաց եւ գաւառաց կուտակալներուն եւ դատաւորներուն կը տանէին : Ունէ դատարանի որոշումէն դժգոհ դատախազը , կամ ամբաստան-

* Քննադատները տակաւին չեն կրցած փաստել թէ Մովսէս Համուրապիի օրինակիրքէն ուղղակի ընդօրինակումներ ըրած է : Ծ . Խմբ .

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Նոր տեսակ մը մեթատ հնարուած է հաստատուն մարմիններու ելեկտրոններուն արագութիւնը չափելու համար։ Այս մեթոտը աստղերու արագութիւնը չափող մեթոտին քիչ մը բարեփոխեալ մէկ ձևն է։

Իտալիոյ Մինտուրնօ քաղաքին մէջ (նախկին Օրուսկի քաղաքը, որ Ք. Ա. 314ին Հռովմի դէմ պատերազմած էր,) պիզուս կատարուեցաւ և երևան ելաւ Տիբերիոս կայսրին գլուխը և Օգոստոս կայսրին արձանը, շատ մը շինութեան թրծուն աղիւսներ։ Ութունի չափ արձանագրութիւններ ալ գտնուեցան պատերու մէջ, սակայն տակաւին չեն կարդացուած։

Նոր ելեկտրական լամպ մը շինուած է որ թռչող միջատները կ'ըսպաննէ շրնորհիւ ելեկտրականացած թելերուն՝ որոնք անոր շուրջը փաթթուած են։

Հոլանտացի գիտուն մը՝ Բապըրթ Փէյփ անուն՝ վերջերս այն տեսակ գիտ մը հնարեց որ բոլոր աշխարհը ապշեցուց։ Տեսակ մը ճառագայթ գտած է որ աշխարհի ամբողջ գիտնականներուն անձանթ է, և որուն միջոցաւ Հոլանտացի գիտունը ամէն տեսակ ուտելիք, միս, կաթ, հաւկիթ, ալիւր, ձուկ և պտուղներ փտտելէ զերծ կը պահէ։ Ծատ մը գիտուններ քննեցին Բապըրթ Փէյփին գտած այս ճառագայ-

եալը կամ դատապարտեալը, իրաւունք ունէր իր գատը տանիլ մինչև Համուրապիի սողիւ, և այս օգոստափառ ու արդարասէր միապետը յօժարակամ մըտիկ կ'ընէր անոնց։

Համուրապի արդի քաղաքակրթութեան մէջ կարեւոր բաժին ունի։
Կ. ԳՈՒՆՏԱԿՃԵԱՆ (Շարունակելի)

թի ալիքը բայց տակաւին չեն հասկցած անոր ինչ ըլլալը։ Այս ճառագայթին ալիքները զարմանալի յատկութիւններ ունին. — անոնք կրնան թափանցել քարէ պատերուն, երկաթի, կապարի ապակիի և փայտի մէջ՝ անէ մթնոլորտի և ջերմաստիճանի տակ։ Այս ալիքը մագնիսական ասեղը իր ուղիէն կը շեղեցնէ։ Փորձերը յաճախ կրկնուեցան զանազան կերակուրներու վրայ և արդիւնքը շատ գոհացուցիչ եղաւ։ Միջրոպներն ալ այս ճառագայթի ալիքներուն ազդեցութեան տակ երբեք չեն զարգանար։

Ջուրը մաքրող ելեկտրական գործիք մը հնարուած է որ ելեկտրական հոսանքի միջոցաւ միջրոպները կ'սպաննէ։

Անկորայի այծի մագէն ոստայնանկ մը կրցած է արուեստական մուշտակ շինել։

Քալիֆորնիոյ մէջ ջրիմուռէն ալիւր կը պատրաստուի, ենթարկելով զայն 1200 աստիճան տաքութեան։ Այս ալիւրէն հաց կը պատրաստուի և կը ծախուի Քալիֆորնիոյ մէջ։

Մայայ ցեղին կողմէ շինուած ամենահին քաղաքին մէջ, Կեդրոնական Ամերիկայի Կուաթէմալա երկիրը, պեղումներ կատարուեցան և կարեւոր գիտեր եղան։ Հոս գտնուեցաւ մեհենական արձանագրութիւն մը որ ամէնէն հինը կը հանդիսանայ Արեմուտքի մէջ և կը թուագրէ Յ. Ք. 68։ Բայց գտնուած քաղաքը այս յիշատակութենէն շատ աւելի հին է։ Ամերիկայի մէջ առաջին անգամ գրելու գրութիւն մը ստեղծողը Մայայ ցեղը եղած է և իր գործածած թուանշաններն ու թուականները կը ցուցնեն թէ Ասիացիներէ և Եւրոպացիներէ շատ աւելի յառաջ գացած է որպէս աստղաբաշխներ և թը-

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՏԵՂԱԿԱՆ

ԱՒԵՏԻՍ ԱՐՔԵՊՍ. ԱՐՓԻԱՐԵԱՆԻՊԷՅ-
րութի մէջ Հայ Կաթողիկ համայնքի իբր
Պատրիարք-Կաթողիկոս ընտրութեան
առթիւ Վեր. Ա. Շիրաճեան յանուն Հա-
լէպի Հայ Աւետ. համայնքի կը զրկէ հե-
տեւեալ շնորհաւորական հետադիրը.

Ամենապատիւ

Տ. Աւետիս Արքիարեան Կաթողի-
կոս-Պատրիարք Կաթողիկ Հայոց,
Պէյրուս,

Հալէպի Հայ Աւետ. համայնքը պա-
տիւն ունի իր անկեղծ շնորհաւորու-
թիւնները ներկայացնելու Ձերդ Ամե-
նապատուութեան Կաթողիկոս-Պատրի-
արք ընտրութեան առթիւ և կը մաղթէ
երջանիկ և յաջող գործունէութիւն:

(ստորագրութիւն)

ւարաններ: Մեր գործածած գէրօնը-
շանը երբ տակաւին Հնդկաստանի մէջ
չէր հնարուած, ուսկից Արաբները առ-
նելով Եւրոպա բերին զայն, արդէն
ատկէ հազար տարին ետ առաջ Մայա
գիտուններ հնարած էին: Հսկայ դի-
տարան մը գտնուած է Եռագաթանի մէջ
և ապացուցուած է թէ իրենց գործա-
ծած օրացոյցը շատ աւելի ճիշտ էր քան
Արեւելքի մէջ գործածուածները: Ասկէ
զատ ճարտարապետութիւնը շատ յա-
ռաջացած էր անոնց մէջ:

ՄԵԾ ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ գործող լու-
սանկար մեքենայ մը պատրաստուեցաւ,
որ դիւրութեամբ ինքնաշարժով փախ-
չող աւազակներուն պատկերը կ'առնէ:

ՕՀԱՅՕ ԳԵՏԻՆ յատակը 87 տք փորե-
լէ ետք անասունի մը աղւան գտնուե-
ցաւ, որ մէկուկէս օգայէ աւելի ծանր,
7 մատ երկայն և 4 մատ լայն է:

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

Ասոր՝ նորընտիր պատրիարքը կը
պատասխանէ իր հետեւեալ նամակով.

Վերապատուելի Տէր,

Մեծ գոհունակութիւն պատճառե-
ցին մեզի շնորհաւորութիւնները և բա-
րեմաղթութիւնները, որ, յանուն Հալէ-
պի Հայ Բողոքական հասարակութեան,
հաճեր էիք ուղղել մեզի, մեր Կաթողի-
կոս Պատրիարք ընտրուելուն առթիւ:
Կը յայտնենք Ձեզի և Ձեր ամբողջ հա-
մայնքին մեր ջերմագին շնորհակալու-
թիւնը, կը մաղթենք Աստուծոյ ամէն
բարիք, և սիրոյ և օրհնութեան ողջջն-
նեցով ենք

Վերապատուելի Տէրութեանց

Աղօթարար

(ստորագրութիւն)

**ՀԱԼԷՊԻ ՊՕՅԶ ՀԱՅ ՍՔՈՒԼԻ
ԿԵԱՆՔԷՆ**

Դպրոցիս աշակերտութեան թիւը ե-
ղած է 152, ասոր 65 ը Կրտսերնկրու-
Բաժնին մէջ, որուն ուսուցիչներէն
Տիար Ս. Կանիմեան Կիլիկեան Դպրոց-
իւն Վարժարանին մէջ անդիւնէրէն դա-
սաւանդութեան կ'օգնէ: Նոյնպէս բար-
ձր կարգի աշակերտներէն Մ. Պարսիկ-
եան, Թ. Շամլեան, Մ. Անսրլեան անդ-
իւնէն դաս կրեաւ Հալէպի Յոյն Կա-
թողիկ վարժարանին մէջ: Դպրոցիս
ուսանողական ամսաթերթը, The Re-
porter, այս տարի եւս պիտի հրատա-
րակուի:

Դպրոցս այցելած են Տր. և Միսիս
Մ. Ուէսթ, և Տր. և Միսիս Ու. Հար-
փըր: Վերջինը խօսած է «Աշակերտնե-
րը ի՞նչ կ'ակնկալեն դպրոցէն» նիւթին
վրայ, իսկ առաջինը Հնդկագետանի մա-
սին: Տր. Ուէսթ հեղինակն է անդ-
իւնէն լեզուի շատ մը գործադիրքերու,
զորոնք գործածելու կ'երպը առարկայա-
կան կերպով սորվեցնելու համար դըպ-

րոցին մէջ իւր դասագիրքը գործածող կարգերուն դաս տուաւ ուսուցիչներուն ներկայութեամբ:

Յաւալի արկածի մը պատճառաւ դպրոցս սուգով կը փակէ իր առաջին ամիսը: Յարութիւն Մազմանեան, 15 տարեկան գիշերօթիկ ուսանող մը կախօրրանի վրայ ճօճելու ատեն գետին կ'իյնայ և փայծաղը կը պատռի: Ալթունեան հիւանդանոցի մէջ մի քանի օրուան անօգուտ դարմանումէ ետքը Հոկ. 19 ի իրիկունը կը մեռնի: Յուզարկաւորութեան տխուր արարողութիւնը կը կատարէ Վեր. Ս. Մանուկեան Էմմանուէլ Հայ Աւետ. եկեղեցիին մէջ՝ մասնակցութեամբ ուսուցչական մարմինն և աշակերտութեան: Հոկ. 20 ին ի նշան սուգի դպրոցը փակ կը մընայ: Մեռնելէն առաջ տղուն կը հարցուի թէ փափաք մ'ունի՞, որուն կը պատասխանէ. «Մայրիկին մի՛ իմացնէք, թող չխռովի»: Ազնիւ պատանին Զահլէ իր ծնողաց քով գտնուած ատեն, Յունաստանի մէջ իր մօրաքրոջ և անոր զաւկին մահը գուժող նամակը իր մօրմէն գաղտնի պահած էր նոյն որդիական փափկանկատութեամբ:

ՀՈՎՈՒԱԿՍՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Վեր. Կ. Յարութիւնեան Հոկ. 17—26ին այցելեց Ալեքսանդրէթի շրջանին չորս Հայ Աւետ. եկեղեցիները: Հոկ. 18, կիրակնօրեայ երկու պաշտամունքները Ալեքսանդրէթի եկեղեցիին մէջ կատարած է, որուն քարոզիչը Պատ. Կ. Գըրգեաշարեան անկումի մը պատճառաւ ծունկէն վնասուած և ատենուան մը համար անշարժ մնալու դատապարտուած է: Եկեղեցիի և դպրոցի շէնքերուն համար նոր գետին մ'ալ ծախու առնուած է, ճիշտ նախկին դնուածին կից, որով՝ գնուած գետնի տարածութիւնը հասած է 1123 քառ. մէթրի:

Վեր. Յարութիւնեան երկուշաբթի օրը անցուցած է Յարթըսլը, ուր իբր ուսուցիչ պիտի գործէ Պոյզ՝ Հայ Սքուլի ուսումնաւարտներէն Յովհ. Ահարոնեան:

Չորեքշաբթի և հինգշաբթի օրերուն Պէյլան գտնուած է, ուր կը գործէ Պատ. Յակոբ Կիւրլէքեան, իբր քարոզիչ և ուսուցիչ: Վարժուհի մը ևս կ'աշխատի դպրոցին մէջ: Յաւալի է որ Պէյլանի Միացեալ վարժարանը փակուած է, և ամէն հայ յարանուանութիւն իր սեպհական դպրոցը բացած է:

Հոկ. 25ին Դըրբգլսան գտնուած և կիրակնօրեայ պաշտամունքը կատարած է դպրոցի շէնքին մէջ, եկեղեցին նորագոյնեան մէջ ըլլալուն համար: Չորս պատերը երկու մէթր, յատակը և պատուհանները մէկ մէկ մէթր բարձրացուցած են: Բոլոր նորագոյնեան համար 120 օսմ. սակի յատկացուած է: Դըրբոցը ունի 60 երկսեռ աշակերտներ և երկու վարժուհիներ: Եկեղեցին ունի նաև 4 սենեակներէ բաղկացեալ երկրորդական մը և վարժուհիի բնակութեան համար սենեակ մը:

ՊԵՅՐՈՒԹԷՆ ՏԻԱՐ Յ. Պուճրկանեան Հոկ. ի 4րդ Շաբաթին սկիզբը Քէսապ հասած է և հայ Աւետ. դպրոցին մէջ իբր տնօրէն ուսուցիչ սկսած է պաշտօնավարել:

ԱԻԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ Հալէպի Շրջանի վարչութեան կողմէ ուսուցչական պաշտօնով զրկուած են Օրք. Վ. Մանուկեան՝ Քէսապ, Ա. քէլեան և Լ. Գալճըեան՝ Քէօրքլինէ: Ա. Զէքիճեան՝ Պիթիաս, Վ. Գ. Մանուկեան՝ Ալեքսանդրէթ, Մ. Վարպետեան՝ Ճարապլուտ, Ա. Քէշիշեան՝ Պէյլան, Վ. Շանլեան՝ Գըրբգլսան:

ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ կատարելապէս անպաքինած է և սկսած է Ամերիկայի մէջ

շրջիւ զբաղելով Հալէպի Գուէճի ի նըպաստ գործունէութեամբ: Միսիս է. Մէրիլ և իր գուստը Միս Մարկրիթ Մէրիլի հետ ներկայիս կ'ուսանի Հարթֆըլտ Սէմինէրի մէջ:

ՀՈԿ. 18ԻՆ ՊԵՅՐՈՒԹԻ ՌԵՄԷՅԼ Թաղի նորակառոյց Ազգ. վարժարանին բացման հանդէսը տեղի ունեցած է նախագահութեամբ Կարօեան Սրբազանի. Շահէ Եպիսկոպոս իր խօսքերով քաջալերած է հանդիսականները: Դպրոցը կոչուած է Ազգ. Ռուբինեան Վարժարան:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՅՐԱՆՍԱՅԻ Հայ գաղթականները Վալանս և շրջակայքը 5000, Րոման՝ 200, Լասոն գիւղը՝ 20, Փոն-տ'Օպլենաս՝ 752, Փրիվա, Ֆլավիսք, Սէն Ժիւլէն, Սէն Րամպէր և Սէն Վալրիէ 280 հայեր կան, և կ'աշխատին գանազան գործարաններու մէջ:

ԽԱԼԻՖԱ ԱՊՏԻԻԼ ՄԵՃԻՏ Բ. Թուրքիոյ վերջին սուլթանը, որ Ֆրանսայի Նիս քաղաքը կը բնակի, Նիսի Լիսէին աշակերտներէն Նուպար Արփիարեանը իր պալատը կը հրաւիրէ և զայն կը շնորհաւորէ իր շատ մը դասերուն մէջ անման յաջողութեան և վարձատրութեան համար, մասնաւորապէս Ֆրանսերէն շարագրութեան եւ գծագրութեան մէջ: Խալիֆան պատանի Նուպարի նուիրած է Մալէի քառահատոր պերճակազմ Տիեզերական Պատմութիւնը:

ԱՆԻԻ ՉԵՉԱՐԱՐԻ ՀԱՆՔԵՐԸ Հեշաքար հայթայթած են 1928—29 ին 700000 ռուպլի արժէքով, 1929—30 ին՝ 2,160,000 ռուպլի արժէքով. այս տարի ծրագրուած է 5,000,000 ռուպլի արժէքով հեշաքար արտադրել, որ փայլուն ապագայ մը կը խոստանայ:

ԱՐԱՔՍ ԳԵՏԸ յարգելով ահագին վընաս պատճառած է հին Նախիջևանի մէջ՝ Հայաստան:

ԳՈԼԷԺ ՏԸ ՅՐԱՆՍԻ հայապիտական ճիւղին ուսուցիչը, հայր Մայէրաս, հայաստանի կառավարութեան կողմէյատկապէս հրաւիրուած է Երեւանի համալսարանին մէջ դասախօսելու համար:

ՓԱՐԻՉԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ որոշած է 1500 անգլիական օսկրյատկացնել Երեւանի մէջ իր անունով հիմնած Արհեստանոց — վարժարանին զայն ընդարձակելու համար:

ԳԻՄԻԱԳԷՏ ՏԻԱՐ Ա. ՉԱՔՐԵԱՆ, Սօրպոնի քիմիաբանական աշխատանոցի պաշտօնեաներէն, Փարիզի Գիտական Ակադէմիին կողմէ Ռօսքով զրկուած է, տեղւոյն ծովաջրերուն հանքային նիւթերը վերլուծելու համար:

ՅԱՌԻԼԸՐԻ Հայ Աւետ. եկեղեցիին հովիւը Վեր. Կ. Մանավեան 12 տարուան գործունէութենէ հտքը հրաժարած է և եկեղեցին անոր հրաժարակաշնը ընդունած է:

ԼՈՍ ԱՆԿԷԼԷՍԻ հայոց թիւը հասած է մօտ 8000 ի:

ՓՐԱԿԱՅԻ (Չէխօ—Սլովաքիա) համալսարանին մէջ ներկայիս 6 հայ ուսանողներ կը գտնուին: Քաղաքին մէջ կը բնակին 4 հայ ընտանիքներ և նոյնքան մ'ալ գաւառները:

ԿԻՊՐՈՍԻ ապստամբութեան առթիւ հակահայ սաստիկ զբգոծութիւններ տեղի ունեցած են ամեն տեղ. տրուած տեղեկութիւնները եթէ ստոյգ են՝ առաջնորդական փոխանորդը սպաննուած, հայ եկեղեցին հրդեհուած և Միլզոնեան հաստատութիւնը կրակուած է:

Այս հոդոյնը տպագրուած է 1929 թ. 12 ամի 15 օրը:

Ե. Բ. ԶԱՆԻՑԻ ԷԶԸ

ՄԵՌԱԾ ԱՆՑԵԱԼԸ

Միշտ խորհած եմ թէ որքան մեծ-նամ նոյնքան պակաս սխալներ և յանցանքներ պիտի գործեմ: Թէեւ յետքննութեան այդ ուղղութեամբ շատ բարեփոխուած չեմ տեսներ ինքզինքս, սակայն ես մտադիր չեմ յանցանքներու և սխալներու չուրջ մտատանջ-աւելով ապրիլ:

Վաղը ես նորէն մաքուր էջ մը բանալով պիտի սկսիմ: Անցեալի մէջ քու որքան սխալած և մեղանշած ըլլալդ այնքան կարեւորութիւն չունի, եթէ՝ դուն այսօրուրնէ սկսեալ բարի կեանք մը անցնելու որոշումը տուած ես: Հաւանաբար ասկից շատ առաջ ալ նոյն որոշումով ապրելու սկսած ես: Ինչ որ ալ ըլլայ միշտ դէպի վեր մագլցիր և երբեք՝ դէպի վար:

Մեր թանկագին ոյժերն ու կարողութիւնները, մեր անցեալի մեղքերուն և սխալներուն վրայ որոճալով վատնելու չենք, որքան ալ ծանրակշիւ ըլլան անոնք:

Երբ կարգ մը մարդիկ այդ մեղաւոր կիներ Քրիստոսի բերին, իրենց հետաքրքրութիւնը իսկոյն ամօթի փոխուեցաւ, երբ ազնիւ ուսուցիչը և մարդկային սրտին թափանցող Հոգին իրենց ըսաւ. «Ո՛վ որ անմեղ է թող կնկան քար մը նետէ»: Այս լսելով անմիջապէս ամօթահար խոյս տուին: Ահա այդ ատեն էր որ այդ վեհ նկարագրին գեղեցկութիւնը և ազնւութիւնը ի յայտ եկաւ, կարծես իր քովը միայնակ մնացած կնկան ըսել ուզեց. «Բարեկամս, ի՞նչ պատահեցաւ, ո՞ւր ես անոնք որ քեզ իբրեւ զէջ օրինակ հոս բերին»: Թէեւ ան իրականապէս «եւ ալ քեզ չեմ դատապարտեր. գնա՛ և այլեւս մի՛ մեղանշեր», խօսքերը ըսաւ սակայն հա-

ւանաբար ասով ըսել ուզեց. «Գնա, ճշմարիտ գեղեցկութիւնը անկեղծ սիրոյ մէջ փնտռէ և ատոր միջոցաւ օգտակար և ուրախ եղիր»:

Մեր անցեալի մէջ անցուցած կեաքը չէ այլ այս րոպէիս մեր ի՛նչ ըլլալն է որ կարեւոր է: Որքա՛ն սպիններ ունի մեզմէ իւրաքանչիւրը:

Անառակ որդին երբ իր անցեալ կեանքին վրայ էր որ կը խոկար, իսկոյնսթափելով հասկցաւ թէ իր անցեալը որքան յիմարօրէն վատնուած էր: Սակայն ան անցեալը մէկդի թողլով ինքնիրեն եկաւ և քաջաբար որոշեց. «Ես պիտի ելլեմ և երթամ հօրս», մէկը որ զինք կը սիրէր և ուրախութեամբ պիտի ընդունէր, ինչպէս որ ալ ըրաւ:

Իւրաքանչիւր օրին մեզի բերած նոր լոյսով մենք սրտանց որոշելու ենք դէպի վեր բարձրանալ, և եթէ երբեք նորէն իյնանք կրկին և կրկին նոր ելք մը գտնելու ենք մեր եղածէն աւելի բարձրը սաւառնելու համար:

«Ես պիտի ելլեմ», ասկից աւելի ազդու և անկեղծ աղօթք մը ինչ կրնայ ըլլալ աշխարհի վրայ:

Թրգմ.

Հայկայ (ՏՈՒԹ.) Ե. Քէթէնճեան

ՀՈԿ. 25 ԻՆ ՀԱԼԷՊԻ Զանից Ընկերութիւններու միութիւնը իր ընդհանուր ժողովը ունեցաւ Բեթել Աւետ. Եկեղեցիին սրահը, մասնակցութեամբ մօտ 200 երկսեռ անդամներու: Միութեան մէկ տարուան տեղեկագիրը կարգացուեցաւ, Ս. Ֆրանսիսգոյի մէջ տեղի ունեցած Ե. Բ. Զանիցի համաժողովին մասին տեղեկութիւն տրուեցաւ, Օր. Տէր Մըկրտիչեան Ս. Ֆրանսիսգոյի համաժողովին բացման ճառին հայերէն թարգմանութիւնը կարգաց, (որուն ամփոփումը յաջորդիւ), և Հալէպի Կ. Հայ Աւետ. Ժող. եկեղեցիին հովիւը Պատ. Յ. Զագ-մագճեան գեղեցիկ կերպով խօսեցաւ

ԴԱՄԱՐԱՆԻԴ ԳՈՎ

Թախիծդ է ա՛յն՝ որ դամբանէդ անշէջօրէն կը մնայ,
Անհետանայալ իմ մանկունակ գերեզմանիս քարին տակ...
Յաղթանակդ է և դամբանիդ յարութիւնը քու հսկայ
Տառապանքէդ՝ Աստուածութեանդ անմահութեանն օրինակ:

Տէ՛ր, երանի՛ այն մատներուն, որ դամբանիդ վըրայէն,
Դըլորելով քարն դամբանիդ՝ յոյս ու խէշալդ վառեցին՝
Ա՛յն ցոլքերով, զոր գէթ օր մը իմ ալ յոյգերս երբ այրին,
—Մարած յոյսով սիրոյ բոցերու, յաղթանակով մ'արածին:

Տառապանքի ապառաժն է՝ զրեր են ի՛մ ալ սրտիս...
Տարիներով դամբանիս մէջ լուռ է քննարս ու հոգիս...
Տարիներու խաւարապատ գերեզման մ'են ըրեր զիս...

Ապառաժ մ'է հոն անիրաւ խաչելութեան, արցունքի,
Որու տակ, Տէ՛ր, միշտ լուռութեան կ'սպասէ սիրաս սիրակէդ...
Մատներովդ սուրբ, եկուր, Տէ՛ր, ա՛լ զըլորել քարն իմ սրտէս...

Ամերիկեան Դուէճ, Հալէպ

Յեսսէ

«Քրիստոնեայն և և կը ջանա՞ս» նիւթին վրայ: Հաւաքոյթը շատ լուրջ և շինիչ տպաւորութիւն ձգեց ներկաներուն վրայ:

USUՑԱՆՔ

ԱԶԴԱԿ, Երկօրեայ Հայաթերթ, ազգային, քաղաքական, գրական և արեստեսագիտական: Տարիկան բաժնեկիրն՝ Սուրբոյ համար 425 զրշ. Սուրբական, Արտասահմանի համար 6 տոլար:

Հասցէն՝

B. P. 587, Beyrouth, Liban.

USUՑԱՆՔ

Պատանիին գրադարանը, Ա. Շարք, հրատարակութիւն «Սահակ Մեսրոպ» տպագրատան

- | | |
|----------------------------------|---------------|
| 1. Էտմիտոս և Ապողոն | Ու. Մարիա |
| 2. Աքսինոֆ | Տալստոյ |
| 3. Թեւաւոր Զին | Ն. Հօթորն |
| 4. Պահոճ | Տալստոյ |
| 5. Պանտորա | Ն. Հօթորն |
| 6. Եզիա | Տալստոյ |
| 7. Միտաս | Ն. Հօթորն |
| 8. Անտեսուած Կայծը | Տալստոյ |
| 9. Սմայկ | Չարլը՝ Տիքընզ |
| 10. Մարգրիկ ինչո՞վ կ'ապրին | Տալստոյ |
| 11. Օկիլը | |
| 12. Դէսէս և Լաբլուրինթոսի Վիշապը | |
- Այս յարմարօրէն ընտրուած աւանդովէպերու և պատմուածքներու շարքը, 12 գրքոյքներ, կը ծախուին 10 հգիպտական զրուշով, հաւաք կ'արժէ մէկ զրշ. եգիպ. թարգմանիչն է Տիար Լեւոն Պ. Դալէմքարեան: Հասցէն՝

Sahag Mesrob Press
25, St. Tevfik, Cairo

ՄԻ՛ ՄՏԱՀՈԳՈՒԻՐ ԵՐԲ ՀԻՒԱՆԴ
ՈՒՆԵՆԱՍ

Բժշկին դարձանումին չափ կարեւոր է հիւանդին համար կանոնաւոր խնամք տանիլ, որ սակայն գիտական փորձառութիւն կը պահանջէ:

Ուստի երբ տան մէջ հիւանդապահուհի մը պէտք ունենաք անմիջապէս գիմեցէք:

ՏՈՐ ՆԵՐՍԷՍ ԻՇԽԱՆԵԱՆԻ
ԴԵՂԱՐԱՆԸ, ԽԷՆՏԷՔ,

Ուր պիտի գտնէք Ամերիկեան համալսարանէն վկայեալ և հիւանդանոցներու մէջ միջանի տարուան փորձառութիւն ունեցող հիւանդապահուհի մը:

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Տիկ. Հայկանոյշ Խաչերեան կը փնտռէ իր էրիկը՝ Ատանայի Ղարս Պազարէն՝ Յակոբ Խաչերեանը, որուն որդին կը կոչուի Խաչեր, գոլաստրերը կը կոչուին Լիա և Մարի: Կը խընդրուի հետեւեալ հասցէին իմացնելու:

M. Ohannes Haleblan
Calle Zellarayan 1100
Buenos Aires
Rep. Argentina

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Յովհաննէս Սթամպոլցիեան (Գասպարեան) կը փնտռէ իր քոյրը Եզիսարէթ Սթամպոլցիեանը: Իրենց ծնողներն են Էրզրումի Թորթան վիւղէն Գասպար և Թագուհի: Եզիսարէթ 18 տարեկան էր, երբ Մեծ Պատերազմը սկսաւ և իր խօսեցեալը մարտիրոսի հետ մոռնանալով Ռուսերու կողմը անցած էր: 300 Ֆրանկի վարձատրութիւն մը զինքը գտնողին: Իմացնել սա հասցէին:

Hovhanness Stamboltzian
Restaurant Français
Lataquie, Syrie,

Մաքուր, նրբաճաշակ, խնամքով պատրաստուած

ՈՍԿԻ ԶԱՐԴԵՂԷՆՆԵՐ

ԱՂՈՒՈՐ ԺԱՄԱՅՈՅՆՆԵՐ

ԻՆՔՆԱՀՈՍ ԴՐԻՉՆԵՐ

ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԷ ԱԿՆՈՑՆԵՐ

ունենալու համար զիմեցէ՛ք ռսկերիչ և ժամագործ

ԷՄԱՆՈՒԷԼ Ս. ԽՐԼՈՒԵԱՆԻ ՔՈՎ
ԹԻԻ 17, ԹԻԼԷԼ ՓՈՂՈՑ, ՀԱԼԷՊ,

ուր չափաւոր գիներով գոհացում պիտի գտնէք ձեր պահանջներուն՝ թէ՛ նորը գնելու և թէ՛ հինը նորագել տալու մէջ:

صاحب الامتياز والمدير المسؤول
القس ق. هاروتونيان